ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ե 40/11 - 6142
«07» 11 2018թ.

ՀՀ, ք Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝(+374 10) 44-34-80
Հեռ.՝(+374 10) 44-29-04
Հեռ.՝(+374 60) 37-77-37
Հեռ.՝(+374 60) 37-26-56

«ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միքայելյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մատակարարած տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 2535,76 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, ողջամիտ ժամկետում, փոխարինել Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով, բացի այդ Դուք 23.10.2018թ. գրավոր դիմել էիք քրեակատարողական ծառայությանը, 10 օր ժամանակ խնդրելու առաջարկով, որպեսզի «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի ներմուծողների և տեղական արտադրողների շրջանակներում կատարեիք հարցումներ և ձեռք բերեիք համապատասխան «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, սակայն այդ ժամանակը նույնպես լրացել է, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. նոյեմբերի 7-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 19535,62 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի մասով, որի ընդհանուր գումարը կազմում է 14046892 (տասնչորս միլիոն քառասունվեց հազար ութ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ: 19535,62 կգ-ը դա Պայմանագրի շրջանակներում «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի դեռ չմատակարարված քանակի և ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկների պահեստներում առկա, սակայն Պայմանագրի տեխնիկական

բնութագրին չհամապատասխանող քանակների հանրագումարն է (16999,86 կգ+2535,76 կգ): Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 81053108 (ութսունմեկ միլիոն հիսուներեք հազար հարյուր ութ) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը համաձայն Պայմանագրի 6.3 կետի, տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում, «ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-ից գանձելու է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, որը կազմում է 475500 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (95100000 դրամ x 0,5%), տուգանքը հաշվանցվելու է «ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-ին վճարման ենթակա գումարներից, ինչպես նաև «ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (տուժանք) 1797600 (մեկ միլիոն յոթ հարյուր ինսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով՝ 900001008375 հաշվեհամարին, հիմք՝ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն-որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի դ) կետ:

Մաժամանակ տեղեկացնում ենք, որ «ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-ն պետք է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պահեստներից ետ վերցնի իր կողմից մատակարարված, սակայն Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 2535,76 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, որի գումարը՝ 1823313 (Մեկ միլիոն ութ հարյուր քսաներեք հազար երեք հարյուր տասներեք) ՀՀ դրամը, նույնպես պետք է պահվի «ԲԻԶՆԵՍ ԹՐԵՆԴ» ՍՊԸ-ին վճարման ենթակա գումարներից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ

Կատարող՝
Գրիգոր Հարությունյան
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին
Հեռ.՝ 060 -43-35-35